Չևավորել հանուն հավասարության

Ընտրական համակարգերի և
գենդերային քվոտաների լավագույն,
միջին և անբարենպաստ համակցությունները

Սթինա Լարսերուդ և Ռիտա Թափհորն

Ժողովրդավարության և ընտրությունների աջակցության միջազգային ինստիտուտի (International IDEA) հրատարակություններն անկախ են յուրաքանչյուր ազգային կամ քաղաքական շահերից: Այս հրատարակությունում արտահայտված տեսակետները չեն ներկայացնում International IDEA-ի կամ նրա խորհրդի դիրքորոշումը: Ներկայացված քարտեզները չեն արտահայտում Ինստիտուտի տեսակետը՝ այս կամ այն տարածքի իրավական կարգավիճակի վերաբերյալ և միտված չեն նման սահմանների հաստատմանը. նմանապես, որևէ երկրի կամ տարածքի տեղը կամ չափը չի արտահայտում Ինստիտուտի քաղաքական տեսակետը: Քարտեզները մշակվել են սույն հրատարակության տեքստն ավելի հստակ դարձնելու նպատակով:

© Ժողովրդավարության և ընտրությունների աջակցության միջազգային ինստիտուտ (International IDEA) 2007

Այս հրատարակության որևէ մասի վերահրատարակման կամ թարգմանության համար հարկ է դիմել՝

International IDEA
SE -103 34 Ստոկհոլմ
Շվեդիա

International IDEA-ն ողջունում է իր հրատարակությունների տարածումը և հնարավորինս արագ կարձագանքի վերահրատարակման և թարգմանության դիմումներին:

Շապիկի և քարտեզի ձևավորումը՝ Մագնուս Ալմարի (ընդօրինակված՝ *Electoral System Design: An Overview of the New International IDEA Handbook*, International IDEA, Stockholm, 2005)
Շապիկը՝ Անոլի Պերերայի
Գրաֆիկական ձևավորումը՝ Trydells Form-ի
Տպագրությունը՝ «Five Stars Design» ՍՊԸ-ի, Երևան, ՀՀ

ISBN: 978-91-85724-11-6

Բովանդակություն

1. Ներածություն և հիմնական տեղեկություններ 4
2. Ինչ է ընտրական համակարգը 6
3. Ինչ է քվոտան 10
4. Ընտրական համակարգի փոփոխականները, որոնք ազդում են կանանց ներկայացուցչության վրա 13
5. Ընտրական համակարգերի և քվոտաների համակցությունը. արդյունքներ 16
6. Այլ փոփոխականներ, որոնք ազդում են կանանց ներկայացուցչության մակարդակի վրա 23
7. Եզրակացություններ և առաջարկներ 25
8. Նշումներ 27
9. Նյութերի ցանկ՝ հետագա ընթերցանության համար 27
10. Տերմինների բառարան 30

1. Ներածություն և ընդհանուր տեղեկություններ

Համաձայն միջխորհրդարանական միության (Inter-Parliamentary Union)[1] 2007թ-ի հունվարի՝ վիճակագրական տվյալների, օրենսդիր մարմիններում կին պատգամավորների համամասնությունը միջինում կազմում է ընդամենը 17.2 տոկոս: Եվ սա, չնայած այն հանգամանքին, որ աշխարհի բազմաթիվ երկրներ ճանաչել են այն փաստը, որ կանայք բավականաչափ ներկայացված չեն քաղաքականության մեջ և սկսել են միջոցներ ձեռնարկել՝ օժանդակելու համար կանանց մուտքը՝ քաղաքականություն և օրենսդիր մարմիններ:

1995թ-ին մեկնարկեց Պեկինյան գործընթացը, որն ուղղված էր օրենսդիր մարմիններում կանանց առնվազն 30 տոկոս ներկայացուցչության ապահովմանը: Վերոնշյալ 30 տոկոսը դիտարկվում է իբրև «կրիտիկական զանգված», որն անհրաժեշտ է, որպեսզի կանայք կարողանան էական ազդեցություն ունենալ տղամարդկանց մենաշնորհ հանդիսացող տիրույթում: Չնայած վերջին տարիներին արձանագրված աննշան դրական փոփոխություններին, ըստ 2007 թ-ի հունվարի տվյալների, ընդամենը 19 երկրներում է կանանց ներկայացուցչությունը խորհրդարաններում հասել 30+ տոկոս մակարդակի:[2]

Արական սեռի իրենց գործընկերների համեմատ, քաղաքականություն մուտք գործելու ճանապարհին կանայք շատ ավելի մեծ խոչընդոտների են հանդիպում: Ժողովրդավարության և ընտրությունների աջակցության միջազգային ինստիտուտի (International IDEA)՝ *«Կանայք խորհրդարանում. թվերից այն կողմ»* (“Women in parliament: Beyond numbers”, 2005) վերամշակված հրատարակությունը ներկայացնում է առկա մարտահրավերները, ինչպես նաև առաջարկում է դրանց հաղթահարման միջոցները: Կանանց համար քվոտաների կիրառումը՝ օրենսդիր մարմին նրանց մուտքն ապահովելու գործուն միջոցներից մեկն է:

Բացի քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգեբանական գործոններից, որոնք խոչընդոտում են կանանց մուտքը քաղաքականություն, մեկ այլ շատ կարևոր փոփոխական է հանդիսանում տվյալ երկրում գործող ընտրական համակարգը, որն անմիջականորեն ազդում է խորհրդարան կանանց ընտրվելու հավանականության վրա: Ժողովրդավարության և ընտրությունների աջակցության միջազգային ինստիտուտն իր *«Ընտրական համակարգերի մշակում. International IDEA-ի նոր ձեռնարկ»* (“Electoral System Design: the New International IDEA Handbook”, 2005) հրատարակությունում ներկայացնում է տարբեր ընտրական համակարգերի առանձնահատկությունները:

Սույն հրատարակությունն ամփոփում է International IDEA-ի կողմից հրատարակված՝ վերը նշված երկու ձեռնարկների վերլուծությունները: Այն ներկայացնում է տարբեր ընտրական համակարգերի և տարբեր տիպի քվոտաների համադրման ուղիները, գնահատելով, թե ինչպես ընտրական համակարգերի և քվոտաների համադրության արդյունքում հնարավոր

կլինի հասնել կանանց առավել լայն ներկայացուցչությանը խորհրդարանում: Սույն հրատարակության անմիջական նպատակն է՝ ծառայել որպես ուղեցույց բոլոր նրանց համար, ովքեր աշխատում են քաղաքականության մեջ կանանց ներկայացուցչությունն ընդլայնելու ուղղությամբ:

2. Ինչ է ընտրական համակարգը

Այս բաժնում նկարագրվում են տարբեր ընտրական համակարգեր՝ ընդհանուր պատկերացում տալու համար ընտրական համակարգերի և քվոտաների հնարավոր համադրությունների վերաբերյալ: Տվյալ երկրում գործող ընտրական համակարգը կարող է անմիջական ազդեցություն ունենալ կանանց քաղաքական մասնակցության վրա:

2.1 Ընտրական համակարգի սահմանումը

Գոյություն ունեն ընտրական համակարգի բազմաթիվ սահմանումներ. ամենափոքր վարչական մանրուքներից սկսած՝ մինչև քաղաքական ամենալայն համատեքստը, ամեն ինչին տարբեր դեպքերում հղում են կատարում որպես տվյալ երկրի ընտրական համակարգի: Այսպիսով, ներկայացուցչության վրա ընտրական համակարգի ունեցած ազդեցությունն ընդգծելու նպատակով այն սահմանվում է որպես՝

այն մեթոդը, որով ստացված քվեները վերափոխվում են մանդատների:

Ընտրական համակարգի երեք հիմնական բաղադրիչներն են.

- ընտրատարածքի մեծությունը/չափը, որով և որոշվում է, թե քանի ներկայացուցիչ է ընտրվում տվյալ ընտրատարածքից,
- ընտրական բանաձևը, որը սահմանում է, թե ինչպես է որոշվում տվյալ մանդատին հավակնող հաղթողը,
- քվեաթերթիկի կառուցվածքը, որով սահմանվում է, թե արդյոք ընտրողը քվեարկում է տվյալ թեկնածուի, թե քաղաքական կուսակցության օգտին, ինչպես նաև որոշվում է՝ արդյոք ընտրողը մեկ ընտրություն է կատարում, թե կարող է արտահայտել մի քանի նախապատվություններ:

Ընտրական համակարգերը կարող են դասակարգվել ընտանիքների՝ ըստ այն ընթացակարգի, որով ստացված քվեները վերափոխվում են մանդանտերի: Ժողովրդավարության և ընտրությունների աջակցության միջազգային ինստիտուտն առանձնացնում է երեք հիմնական ընտանիք՝ պլյուրալիստական/մեծամասնական, խառը և համասնական համակարգեր, ինչպես նաև չորրորդ ընտանիքը, որը ներառում է ընտրական այն համակարգերը, որոնք չեն կարող դասվել վերոնշյալ երեք ընտանիքներից և ոչ մեկում: Այս չորս ընտանիքներում կարող են առանձնացվել 12 առանձին համակարգեր:

2.2 Ընտրական համակարգերի տեսակները *Ցուցակներով համամասնական ներկայացուցչության համակարգ (ՀՆՀ)*

Համամասնական ներկայացուցչության համակարգը պահանջում է բազմամանդատ ընտրատարածքների կիրառում: Ցուցակներով համամասնական ներկայացուցչության համա-

կարգի դեպքում՝ յուրաքանչյուր կուսակցություն կամ խմբակցություն բազմամանդատ ընտրատարածքներում ներկայացնում է թեկնածուների իր ցուցակը: Ընտրողները քվեարկում են կուսակցության օգտին, իսկ կուսակցությունները համապետական քվեարկությամբ՝ համամասնորեն իրենց մասնաբաժնին համապատասխան մանդատներ են ստանում: Օրինակ, որոշ՝ փակ ցուցակների համակարգերում, հաղթող թեկնածուները որոշվում են ցուցակում իրենց զբաղեցրած տեղին համապատասխան՝ ըստ հերթականության: Եթե ցուցակները «բաց» են, ապա ընտրողները կարող են ազդեցություն ունենալ թեկնածուների հերթագայության վրա՝ նշելով անձնական նախապատվությունները:

Պարզ մեծամասնության համակարգ (ՊՄՀ)

Պարզ մեծամասնության համակարգը պլյուրալիստական/մեծամասնական ընտրական համակարգի պարզագույն ձևն է: Հաղթող է ճանաչվում առավելագույն քանակությամբ քվեներ հավաքած թեկնածուն, եթե անգամ չի ստանում վավեր քվեների բացարձակ մեծամասնությունը (քվեների 50 տոկոսից ավելի): Այս համակարգը կիրառվում է միամանդատ ընտրատարածքներում: Ընտրողները քվեարկում են թեկնածուների, այլ ոչ թե քաղաքական կուսակցությունների օգտին:

Երկփուլային քվեարկության համակարգ (ԵՔՀ)

Երկփուլային քվեարկության համակարգը պլյուրալիստական/մեծամասնական համակարգ է, որի դեպքում, եթե ընտրությունների առաջին փուլում թեկնածուներից կամ կուսակցություններից և ոչ մեկը չի ստանում քվեների բացարձակ մեծամասնություն (50 տոկոսից ավելի), ապա անցկացվում է քվեարկության երկրորդ փուլ: Երկփուլային քվեարկության համակարգը կարող է ունենալ *պլյուրալիստական/մեծամասնական* ձև, երբ երկուսից ավելի թեկանածուներ մրցում են երկրորդ փուլում և հաղթող է ճանաչվում նա, ով ստանում է քվեների առավելագույն քանակը՝ անկախ այն հանգամանքից՝ ստացել է քվեների բացարձակ մեծամասնություն, թե ոչ, կամ *մեծամասնական* ձև, երբ քվեարկության երկրորդ փուլին մասնակցում են միայն առաջին փուլում առավելագույն քվեներ ստացած երկու թեկնածուները:

Զուգահեռ համակարգ

Զուգահեռ համակարգը խառը համակարգի տեսակ է, որի դեպքում ընտրողներն իրենց ընտրությունը կատարում են միաժամանակ երկու տարբեր՝ համամասնական ներկայացուցչության և (սովորաբար) պլյուրալիստական/մեծամասնական համակարգերի զուգակցմամբ: Սակայն այս դեպքում, համամասնական համակարգով արդյունքները հաշվելիս հաշվի չեն առնվում պլյուրալիստական/մեծամասնական համակարգով բաշխված մանդատները:

Խառը համամասնական համակարգ (ԽՀՀ)

Խառը համամասնական համակարգը խառը համակարգի տեսակ է, որի դեպքում ընտրությունը կատարվում է երկու

տարբեր համակարգերով, առավել հաճախ, պլյուրալիստական/մեծամասնական՝ սովորաբար կիրառվում է միամանդատ ընտրատարածքներում, և համամասնական ներկայացուցչության ընտրական համակարգերի համադրության միջոցով: Համամասնական տեղերը փոխհատուցում են ցանկացած անհամամասնություն, որ ծագել է պլյուրալիստական/մեծամասնական համակարգի արդյունքում:

Բլոկային քվեարկություն (ԲՔ)

Բլոկային քվեարկությունը պլյուրալիստական/մեծամասնական համակարգ է, որը կիրառվում է բազմամանդատ ընտրատարածքներում: Ընտրողներին տրվում է այնքան քվեի իրավունք, որքան թեկնածու պետք է ընտրվի: Առավել մեծ թվով քվեներ հավաքած թեկնածուները ստանում են մանդատը: Այս համակարգի դեպքում, ընտրողները սովորաբար քվեարկում են թեկնածուի, այլ ոչ թե՝ կուսակցության օգտին: Բլոկային համակարգերի մեծ մասում՝ ընտրողները կարող են օգտագործել իրենց քվեներից այնքանը, որքանը՝ կցանկանան:

Սահմանափակ քվեարկություն (ՍՔ)

Սահմանափակ քվեարկությունը բազմամանդատ ընտրատարածքներում կիրառվող ընտրական այն համակարգն է, որի դեպքում ընտրությունը կատարվում է թեկնածուների ցուցակ ներկայացնող քվեաթերթիկի միջոցով: Ընտրողներից յուրաքանչյուրին տրվում է մի քանի՝ բայց նախատեսված մանդատներից պակաս քվեի իրավունք: Հաղթող են ճանաչվում առավելագույն քվեներ ստացած թեկնածուները:

Մեկ անփոխանցելի քվեի համակարգ (ՄԱՔՀ)

Մեկ անփոխանցելի քվեի համակարգի պարագայում՝ բազմամանդատ ընտրատարածքում՝ յուրաքանչյուր ընտրող ունի մեկ քվեի իրավունք: Առավելագույն քվեներ ստացած թեկնածուները հայտարարվում են հաղթող: Ընտրողները տվյալ դեպքում քվեարկում են ավելի շուտ թեկնածուի, քան քաղաքական կուսակցության օգտին:

Բլոկային կուսակցական քվեարկություն (ԲԿՔ)

Սա պլյուրալիստական/մեծամասնական համակարգ է, որը կիրառվում է բազմամանդատ ընտրատարածքներում, և որի դեպքում՝ ընտրողներն ընտրություն են կատարում կուսակցական ցուցակների, այլ ոչ թե առանձին թեկնածուների միջև: Քվեների մեծամասնություն ստացած կուսակցությունը ստանում է տվյալ ընտրատարածքի բոլորը մանդատները:

Այլընտրանքային քվեարկություն (ԱՔ)

Այլընտրանքային քվեարկությունը միամանդատ ընտրատարածքներում կիրառվող պլյուրալիստական/մեծամասնական համակարգ է, որի դեպքում ընտրողները նախապատվության կարգով քվեաթերթիկում կարող են նշել մի քանի թեկնածու: Ընտրողները, քվեաթերթիկում իրենց նախապատվությունները նշելու համար, օգտագործում են թվեր: Թեկնա-

ծուն, որը ստանում է վավեր առաջին նախապատվության քվեների բացարձակ մեծամասնությունը (50 տոկոսից ավելի), հայտարարվում է ընտրված: Եթե թեկնածուներից և ոչ մեկը չի ստանում քվեների մեծամասնություն՝ ըստ առաջին նախապատվության, ապա ամենաքիչ քանակությամբ առաջին նախապատվությամբ քվեներ ստացած թեկնածուները բաշխումից հանվում են, իսկ նրանց քվեները վերաբաշխվում են՝ ըստ դրանցում նշված երկրորդ նախապատվությունների՝ մինչև թեկնածուներից որևէ մեկը չի ստանում ձայների բացարձակ մեծամասնություն: Այս համակարգի պարագայում, ընտրողները քվեարկում են թեկնածուի, այլ ոչ թե քաղաքական կուսակցության օգտին:

Մեկ փոխանցելի քվեի համակարգ (ՄՓՔՀ)

Մեկ փոխանցելի քվեի համակարգը կիրառվում է բազմամանդատ ընտրատարածքներում, որտեղ ընտրողներն աստիճանակարգում են թեկնածուներին՝ ըստ նախապատվության, և անմիջապես ընտրվում են այն թեկնածուները, որոնք հատում են առաջին նախապատվությամբ սահմանված ընտրական քվոտան[3]: Հաջորդող հաշվարկներում վերաբաշխվում են ինչպես նվազագույն քվեներ ստացած, դուրս մնացած թեկնածուների, այնպես էլ հաղթող թեկնածուների քվեների մնացորդը, մինչև որ բավարար թվով թեկնածուներ չեն ընտրվում: Սովորաբար, ընտրողները քվեարկում են թեկնածուի, այլ ոչ թե քաղաքական կուսակցության օգտին, չնայած, հնարավոր է նաև կուսակցական ընտրական ցուցակների տարբերակը:

Հաշվարկման Բորդա համակարգ

Բորդա համակարգը, ինչպես միամանդատ, այնպես էլ բազմամանդատ ընտրատարածքներում կիրառվող նախապատվական համակարգ է: Ընտրողներն իրենց նախապատվություններն արտահայտում են թվերի միջոցով՝ աստիճանակարգելով թեկնածուներին՝ նախապատվության նվազեցման կարգով: Հաշվարկների ամփոփման արդյունքում՝ առավելագույն քվե ստացած թեկնածուները հայտարարվում են ընտրված:

3. Ինչ է քվոտան

Կանանց համար նախատեսված քվոտան՝ տղամարդ գործընկերների հետ հավասար պայմաններով, քաղաքականություն մուտք գործելու ճանապարհին առկա խոչընդոտները հաղթահարելու նպատակով՝ առավելությունների տրամադրման ձև է: Այս բաժնում դիտարկվում են քվոտաների տեսակները և նկարագրվում՝ դրանց կիրառման ձևերը: Հնարավոր են քվոտաների և դրանց կիրառման մի քանի մեթոդներ: Կանանց քաղաքական մասնակցությունն ընդլայնելու նպատակին ծառայելու համար անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպես են աշխատում քվոտաները:

3.1 Իրավականն ընդդեմ կամավոր քվոտաների

Առկա են քվոտաների տարբեր տեսակներ. հիմնական տարբերակումը դրվում է մի կողմից՝ կուսակցական կամավոր քվոտաների, մյուս կողմից՝ սահմանադրական և օրենքով սահմանված քվոտաների միջև:

Սահմանադրական քվոտաները հաստատվում են երկրի սահմանադրությամբ, իսկ *օրենքով սահմանված քվոտաները* ներառված են ընտրական, քաղաքական կուսակցությունների մասին կամ այլ համապատասխան օրենքներում: Ըստ սահմանման՝ երկու տեսակներն էլ հիմնվում են իրավական դրույթների վրա՝ պարտավորեցնելով ընտրություններին մասնակցող քաղաքական բոլոր միավորումներին՝ դրանց հավասարապես կիրառումը: Օրենքով սահմանված կամ սահմանադրական քվոտաներին անհամապատասխանությունը կարող է հանգեցնել պատժամիջոցների՝ դրանք չկիրառող քաղաքական միավորների նկատմամբ: Իշխանությունների սահմանած պատժամիջոցները կարող են ներառել ինչպես թեկնածուների որակազրկումից մինչև տույժերի, տուգանքների վճարման հարկադրում, այնպես էլ ամբողջ կուսակցության որակազրկում:

Կուսակցական կամավոր քվոտաները կամավոր կարգով ընդունվում են քաղաքական կուսակցությունների կողմից: Դրանք սահմանվում են հենց կուսակցությունների կողմից՝ որոշակի թվով կամ համամասնությամբ կանանց առաջադրումը երաշխավորելու նպատակով: Ինչպես ցույց է տալիս վերոնշյալ քվոտայի անվանումը, կամավոր կուսակցական քվոտաներն իրավական պարտավորություն չեն ենթադրում և, հետևաբար, գոյություն չունեն նաև դրանք պարտադրող պատժամիջոցներ:

3.2 Քվոտաների կիրառումը

Քվոտաները կարող են կիրառվել թեկնածուների առաջադրման ընթացքում կամ կարող են հիմնված լինել արդյունքների վրա:

Առաջադրման գործընթացում կիրառվող քվոտաները

Առաջադրման գործընթացում քվոտաների կիրառման նպատակն է՝ հեշտացնել կանանց կողմից ռազմավարական

տեղերի զբաղեցումը (կամ ընտրատարածքում առաջադրումը)՝ կուսակցության թեկնածուների ցուցակում, այնպես, որ նրանց տրվի օրենսդիր մարմին ընտրվելու հավասար կամ հավասարին մոտ հնարավորություն:

Կանոնակարգումները կարող են լինել ճկուն՝ կանանց համար բարենպաստ կերպով առաջադրվելու փոքր վերապահումով (օրինակ՝ առաջադրվող թեկնածուների 20 տոկոսը պետք է կին լինի, սակայն առկա չէ ցուցակում նրանց բաշխման վերաբերյալ պարտավորություն. այնպես որ՝ կուսակցական ցուցակներ կիրառող ընտրական համակարգերում նրանք կարող են տեղակայվել ցուցակի վերջում, որտեղ նրանց ընտրվելու հավանականությունը նվազագույն է): Կարող են կիրառվել նաև խիստ կանոններ, որոնք նախատեսում են ցուցակում կանանց համապատասխան բաշխվածություն՝ որպես հակակշիռ տղամարդ թեկնածուների: Այս դեպքում գործածվում են *բաշխման հերթականության կանոնները*, որոնք ներառում են «վագրածի (զեբր) կամ zipper (կայծակաճարմանդ) համակարգը», ուր ցուցակի յուրաքանչյուր երկրորդ թեկնածուն պետք է կին լինի: Մեկ այլ հնարավորություն է որոշակի տոկոսային *շեմի* սահմանումը, օրինակ՝ թեկնածուների ցուցակի առաջին կեսում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների (թե՛ կին, և թե՛ տղամարդ) նվազագույն քանակը պետք է կազմի թեկնածուների ընդհանուր թվի մեկ երրորդը:

Առաջադրման գործընթացում քվոտաները կարող են կամավոր կերպով կիրառվել կուսակցությունների կողմից, ինչպես նաև պաշտոնապես կանոնակարգվել օրենսդրությամբ՝ օրինակ ընտրական օրենքի կամ սահմանադրության միջոցով:

Արդյունքի վրա հիմնված քվոտաներ

Արդյունքի վրա հիմնված քվոտաները երաշխավորում են, որ օրենսդիր մարմնում՝ տեղերի որոշակի տոկոս (օրինակ՝ 20 տոկոսը) կամ որոշակի քանակ (օրինակ՝ 100-ից 20-ը) ամրագրված է կանանց համար[4]:

Արդյունքի վրա հիմնված քվոտաների տեսակներից է *առանձին «միայն կանանց» ցուցակը կամ ընտրատարածքը*, որտեղ կանանց ընտրությունը կատարվում է արդեն կանխորոշված քանակով տեղերի համար: Ինչպես ցույց է տալիս անվանումը, քվոտայի այս տեսակի կիրառման դեպքում, ընտրատարածքում կամ ցանկում՝ որպես թեկնածու առաջադրվում են միայն կանայք:

Արդյունքի վրա հիմնված քվոտայի մեկ այլ տեսակ է «լավագույն պարտվողի» համակարգը, որը ենթադրում է, որ կին թեկնածուներից նրանք, ովքեր հավաքել են քվեների առավելագույն քանակը՝ ընտրվում են՝ լրացնելով քվոտայով սահմանված քանակը, անգամ այն պարագայում, երբ տղամարդ թեկնածուներն ավելի շատ քվե են հավաքել:

Արդյունքի վրա հիմնված քվոտայի յուրաքանչյուր տեսակ պետք է պարտադիր ամրագրված լինի սահմանադրությամբ, ընտրական, քաղաքական կուսակցությունների մասին կամ նմանատիպ այլ օրենքներով, որպեսզի ապահովվի դրա կիրառումը, և օրենսդրում կանանց համար ամրագրված տոկոսի կամ տեղերի քանակն իրավականորեն ապահովված լինի ու

չդառնա այլ՝ մրցակից կուսակցությունների, հավակնությունների առարկա: «Լավագույն պարտվողի» համակարգի պարագայում նույնպես անհրաժեշտ է, որ այն ամրագրված լինի օրենսդրությամբ, որպեսզի կուսակցություններն ընտրությունների ավարտից հետո հնարավորություն ունենան փոխարինել հաջողակ թեկնածուներին (տղամարդ թեկնածուի փոխարեն տեղը հատկացնելով իգական սեռի ներկայացուցչին):

Ի հավելումն այս մեխանիզմների, որոնք կիրառվում են ընտրական գործընթացներում, կանայք կարող են ուղղակիորեն նշանակվել օրենսդիր մարմնում (օրինակ՝ երկրի գործադիր մարմնի կողմից): Քանի որ վերջինս դուրս է ընտրական գործընթացից, ապա այն չի դիտարկվի ընտրական համակարգերի և գենդերային քվոտաների հարաբերակցության վերլուծության ընթացքում:

4. Ընտրական համակարգի փոփոխականները, որոնք ազդում են կանանց ներկայացուցչության վրա

Նույնիսկ եթե քվոտաներ չեն կիրառվում, տարբեր ընտրական համակարգեր ինքնին, տարբեր կերպ են գործում, երբ խոսքը վերաբերում է կանանց ներկայացուցչությանը (մանրամասները տե՛ս այս հրատարակությանը կից ներկայացվող Աղյուսակի առաջին շարքում): Ընտրական համակարգերը նույնպես ազդում են քվոտաներ ներդնելու հնարավորության և ներդրված քվոտաների արդյունավետության վրա:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ համամասնական համակարգերն առավել արդյունավետ են, երբ խոսքը վերաբերում է կանանց ներկայացուցչությանը[5]: Ամեն դեպքում, մեխանիզմը կիրառման մեջ տեսնելու և հասկանալու համար, թե որոնք են վերջինիս անհրաժեշտ հատկանիշները, անհրաժեշտ է համակարգերը բաժանել բաղկացուցիչների և ուսումնասիրել 2-րդ բաժնում արդեն ներկայացված երեք հիմնական տարրերը:

4.1 Ընտրատարածքի մեծությունը/չափը

Ընտրատարածքի մեծությունը կամ չափը ուղղակի ազդեցություն ունի կանանց առաջադրվելու և ընտրվելու հավանականության վրա: Եթե կուսակցություններին հնարավորություն է ընձեռված յուրաքանչյուր ընտրատարածքում մեկից ավելի թեկնածու առաջադրել, աճում է հավասարակշռված ցուցակ ներկայացնելու հնարավորությունը: Եթե պետք է առաջադրվի միայն մեկ թեկնածու, ապա հաճախ այն կլինի տղամարդ հավակնորդը, և կնոջ հետ մրցակցությունը հնարավոր է՝ լարվածություն առաջացնի կուսակցության ներսում: Բացի այդ, եթե կուսակցությունները բախվում են տղամարդ, թե կին ընտրության հետ, սովորաբար ընտրությունը կանգնում է տղամարդ թեկնածուի վրա, քանի որ վերջինս դիտարկվում է որպես ավելի լայն աջակցություն վայելող թեկնածու: Սա ավելի նվազ խնդրահարույց կլինի, երբ ընտրատարածքի չափը մեծ լինի և միևնույն կուսակցությունը ներկայացնող մի քանի անհատներ կարողանան առաջադրվել և ընտրվել, այդպիսով ավելացնելով կուսակցությունների կողմից կին թեկնածուներին գրավիչ պաշտոններում առաջադրելու հավանականությունը՝ առանց «արական» հատվածի շահերը վտանգելու:

Կուսակցությունների մեծությունը/չափը

Ընտրատարածքի մեծությանն անմիջականորեն առնչվում է կուսակցությունների մեծությունը/չափը, այսինքն մեկ ընտրատարածքում տվյալ կուսակցությունից ընտրվող թեկնածուների թիվը: Քանի որ թեկնածուների ցուցակում կամ կուսակցական աստիճանակարգում առաջին տեղերը սովորաբար զբաղեցնում են տղամարդիկ (կուսակցության առաջնորդները և այլոք), կախված կուսակցության մեծությունից ընդլայնվում են նաև կանանց հնարավորությունները, քանի որ այդ դեպքում կուսակցությունները լրացնում են իրենց երկրորդ և հաջորդող տեղերը, բացի իրենց բարձրաստիճան առաջնորդներից, նաև այլ թեկնածուներով: Կուսկացությունների մեծութ-

յունն առավել կլինի, եթե մեծ են ընտրատարածքները, ինչպես նաև այն դեպքում, երբ ընտրություններում հաղթած կուսակցությունների թիվը համեմատաբար փոքր է: Կուսակցության մեծությունը, հետևապես, կապված է ձևավորման գործընթացի հետ, բայց կարող է հաշվարկվել միայն ընտրությունների իրական արդյունքների ամփոփման հիման վրա: Ընտրված կուսակցությունների քանակը կարող է սահմանափակվել, օրինակ՝ օրենսդիր մարմնում տեղեր ունենալու համար օրենքով սահմանված շեմով (օրինակ՝ քվեների 5 տոկոս): Սա բացառում է փոքր կուսակցությունների ներկայությունը խորհրդարանում: Կուսակցության փոքր չափի դեպքում, նույնիսկ կանանց առաջադրված լինելու պարագայում, այն քիչ կամ սահմանափակ ազդեցություն կունենա, եթե իհարկե նրանք բացարձակ առաջատար թեկնածուների թվում չեն:

4.2 Բանաձևը

Շատ երկրներում, ընտրողների լայն զանգվածի համար կուսակցությունները գրավիչ դարձնելու համար, անհրաժեշտ է առաջարկել թեկնածուների բազմազանություն (օրինակ՝ հիմնված սեռի, էթնիկ պատկանելության, տարածաշրջանի, տարիքի վրա): Նման միջոցների կիրառումն ավելի հավանական է այն համակարգերում, ուր մեծ է մրցակից կուսակցությանը տեղեր զիջելու վտանգը: Նման վտանգն ավելի մեծ է, եթե կիրառվող բանաձևը.

ա) հանգեցնում է օրենսդրում մեծ թվով կուսակցությունների ներկայությանը, քանի որ հավանական է, որ կուսակցությունները չափազանց մոտ կլինեն իրար և ընտրողներն ավելի դյուրին կփոխեն կուսակցությունները: Հնարավոր է, որ սա խթանի կուսակցությունների ավելի «ազնիվ» և գենդերային տեսակետից հավասարակշռված երևալու փորձերը, որպեսզի ձայներ չկորցնեն հօգուտ նմանատիպ քաղաքականություն վարող կուսակցության: Հարկ է նշել նաև, որ օրենսդրում կուսակցությունների *շատ մեծ* թիվը կարող է խանգարել կանանց ներկայացուցչությանը, քանի որ կուսակցությունների մեծությունը/չափը նվազում է (տե՛ս *Կուսակցությունների մեծություն/չափ* բաժինը), և/կամ.

բ) հանգեցնում է «վատնված» քիչ քվեների: Եթե օրինակ, մանդատ ստանալու համար անհրաժեշտ է քվեների մեծամասնություն, ապա առավելություն չի տրվում այն կուսակցություններին, որոնք պարզ մեծամասնությունից առավել քվե ունեն (այսինքն՝ մնացորդները «վատնված են») և ոչ մի տեղ չի տրվում հաղթողից քիչ քվե հավաքած կուսակցությանը (այսինքն՝ այդ կուսակցության բոլոր քվեները կորում են): Շատ հավանական է, որ կուսակցությունները նախապատվություն տան իրենց ընտրողների «հիմնական խմբին»՝ թույլ խթաններ ունենալով վերջինիցս դուրս գտնվող ընտրողների ձայներին ապավինելու համար: Այն համակարգերում, ուր բոլոր քվեները հաշվարկվում են հաջորդ տեղը ստանալու տրամաբանությամբ, կուսակցություններն ավելի հակված են ապավինելու ընտրատարածքի բոլոր ընտրողների քվեներին:

4.3 Քվեաթերթիկի կառուցվածքը

Քվեաթերթիկի կառուցվածքը սահմանում է, թե ընտրողներն ինչպես կարող են արտահայտել իրենց կամքը: Ընտրական համակարգերը կարող են հիմնված լինել թեկնածուների ցուցակ ներկայացնող քվեաթերթիկների (օրինակ՝ պարզ մեծամասնության համակարգերը) կամ կուսակցությունների ցուցակ ներկայացնող քվեաթերթիկների վրա (օրինակ՝ փակ համամասնական համակարգերը): Առավել հեշտ է քվոտաներ կիրառել կուսակցությունների ցուցակ ներկայացնող քվեաթերթիկների վրա հիմնված ընտրական համակարգերում, քանի որ յուրաքանչյուր կուսակցությունից ընտրվող թեկնածուների ցանկը կկանխորոշվի առաջադրման ընթացքում, այլ ոչ թե ընտրողների կողմից քվեարկության օրը: Այնուամենայնիվ, այն երկրներում, ուր ընտրազանգվածի վերաբերմունքն ավելի բարեհաճ է կին թեկնածուների հանդեպ և այն ընտրազանգվածի շրջանում, որն ավելի հակված է կողմ քվեարկել կին թեկնածուի, քան այս կամ այն կուսակցության օգտին, թեկնածուների ցուցակ ներկայացնող քվեաթերթիկի վրա հիմնված համակարգի կիրառման միջոցով (ներառյալ համամասնական ներկայացուցչության բաց ցուցակներով համակարգերը) կարելի է խթանել կանանց ընտրությունը՝ քվոտաների կիրառմամբ կամ առանց դրանց:

5. Ընտրական համակարգերի և քվոտաների համակցությունը. արդյունքներ

Այս հրատարակությանը կից ներկայացվող Աղյուսակն առաջարկում է տարբեր ընտրական համակարգերի և քվոտաների համակցությունների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն՝ ցուցադրելով, թե ինչ արդյունքներ կարող են ակնկալվել, երբ որոշակի քվոտա է կիրառվում այս կամ այն ընտրական համակարգում: Համապատասխան համակցությունների հնարավոր արդյունավետությունը ներկայացված է տարբեր գույների կիրառման միջոցով:

- *Կանաչ*. ընտրական համակարգի և քվոտայի համակցությունը հնարավոր է և բարենպաստ՝ կանանց ներկայացուցչության համար:
- *Դեղին*. ընտրական համակարգի և քվոտային համակցությունը հնարավոր է և կարող է բարենպաստ լինել կանանց համար, եթե ընտրական համակարգ/քվոտա համակցությունը բավարարի որոշակի չափանիշների:
- *Կարմիր*. ընտրական համակարգի և քվոտայի համադրությունը անհնար է կամ էլ բարենպաստ չէ կանանց ընդլայնված ներկայացուցչության համար:

Այս դիտարկումն ավելի շատ ուղղված է ընտրական համակարգերի և քվոտաների միջև փոխկապակցվածությանը, քան այս համակցությունների գործնական կիրառման էմպիրիկ (փորձի վրա հիմնված) փաստերին: Հետևաբար, այս աղյուսակը հնարավորություն չի ընձեռում վիճակագրական տվյալների հիման վրա վերհանելու քվոտաների առավել արդյունավետ կիրառումը կամ քանակական այլ տվյալներ:

Աղյուսակն արտացոլում է համապատասխան ընտրական համակարգերի և քվոտաների մի շարք հնարավոր համակցություններ, որոնք կնպաստեն քաղաքականության մեջ կանանց ներակայացվածության աճին: Ամենաբարենպաստ համակցությունները տեղակայված են կանաչ գոտում: Կարելի է առանձնացնել մի շարք նման համակցություններ: Ստորև ամփոփվում են այն համակցությունները և պայմանները, որոնք խթանում են կանանց ընտրությունը[6]:

5.1 Լավագույն համակցություններ

Երկու մակարդակով համակարգերը + ամրագրված տեղերը՝ միայն կին թեկնածուների համար նախատեսված ցուցակ

Բոլոր համակարգերում գոյություն ունեցող կարգը կարելի է փոխակերպել զուտ կանանց ցուցակի, կամ միայն կին-թեկնածուների համար այլընտրանքային ցուցակ ավելացնել: Սա երաշխավորում է կանանց ընտրությունը այն թվաքանակով, որքան որ նախատեսվում է քվոտայով: Նման համակցության օրինակ է Պակիստանը:

*Ցուցակներով համամասնական ներկայացուցչության համակարգ՝ **փոքր** ընտրատարածքներով + առաջա-*

*դրում՝ տոկոսային կանոնակարգում մանդատի բաշխման/հաջորդականության **կանոններով** (օրինակ՝ «zipper» համակարգը, երբ կանայք և տղամարդիկ հերթագայում են միմյանց)*

Այս համակցությունը հստակ աշխատում է այն պարագայում, երբ ցուցակները փակ են: Եթե ցուցակները բաց են, հերթականությունը կարող է փոխվել՝ դրանով իսկ խափանելով նախապես որոշված հերթագայությունը: Հնարավոր է՝ սա մի փոքր ավելի պակաս արդյունավետ լինի փոքր ընտրատարածքներով ցուցակով համամասնական համակարգերում, քան մեծ ընտրատարածքներով ցուցակով համամասնական համակարգերում, քանի որ հավանական է, որ կուսակցության մեծությունը/չափը ավելի փոքր լինի և ավելի շատ տղամարդիկ (ովքեր սովորաբար ցուցակների վերնամասում են գտնվում) ընտրվեն, նույնիսկ *«zipper»* քվոտայի կիրառման դեպքում: Այս համակցությունը կարող է համաձայնեցվել հենց կուսակցությունների ներսում՝ հերթափոխելով նաև ցուցակներում N1 դիրքը՝ որոշ ցուցակներում առաջին տեղում տեղակայելով կանանց, իսկ այլ ցուցակներում՝ տղամարդկանց: Նման համակցության օրինակներ են Դոմինիկյան Հանրապետությունը և էկվադորը:

*Ցուցակներով համամասնական ներկայացուցչության համակարգ՝ **մեծ** ընտրատարածքներով + առաջադրում՝ տոկոսային կանոնակարգում **առանց** մանդատի բաշխման/հաջորդականության կանոնների*

Այս համակցությունը զգալիորեն մեծացնում է կանանց ընտրվելու հնարավորությունը, հատկապես, կուսակցությունների մեծ չափի դեպքում, քանի որ նույնիսկ ցուցակներում բավականին ցածր դիրքում գտնվելով՝ կանայք ընտրվում են: Այս համակցության օրինակ է հանդիսանում Մակեդոնիան:

*Ցուցակներով համամասնական ներկայացուցչության համակարգ՝ **մեծ** ընտրատարածքներով + առաջադրում՝ տոկոսային կանոնակարգում մանդատի բաշխման/հաջորդականության **կանոններով** (օրինակ՝ «zipper» համակարգը, երբ կանայք և տղամարդիկ հերթագայում են միմյանց)*

Այս համակցությունը երաշխավորված է այն դեպքում, երբ ցուցակները փակ են: Եթե ցուցակները բաց են, հերթականությունը կարող է փոխվել՝ դրանով իսկ խափանելով նախապես որոշված բաշխումը: Հնարավոր է, որ սա պակաս արդյունավետ լինի փոքր ընտրատարածքներով համամասնական համակարգերում, քան մեծ ընտրատարածք ունեցող համամասնական ցուցակով համակարգերում, քանի որ կուսակցության չափը տվյալ դեպքում կարող է ավելի փոքր լինել ու ավելի շատ տղամարդիկ (ովքեր սովորաբար ցուցակների վերնամասում են գտնվում) կընտրվեն՝ նույնիսկ zipper քվոտայի կիրառման դեպքում: Նման համակցության օրինակներ են Արգենտինան, Բելգիան, Կոստա Ռիկան և Իրաքը (2005թ. ընտրություններ):

Բլոկային քվեարկություն (ԲՍՔ և ՄԱՔՀ) + ամրագրված տեղեր՝ լավագույն պարտվողի համակարգ

Սա հնարավոր է[7] և կաշխատի, եթե իհարկե բավարար քանակով կին թեկնածուներ ներկայացված լինեն: Սա խթանում է կուսակցություններին՝ կին թեկնածուներ առաջադրել, մրցակիցներին և ոչ մի տեղ չզիջելու համար: Նման համակցության օրինակ է հանդիսանում Հորդանանը:

*Կուսակցական բլոկային քվեարկություն + առաջադրում՝ տոկոսային կանոնակարգում **առանց** մանդատի բաշխման/հաջորդականության կանոնների*

Այս համակցությունը գործուն է, քանի որ ցուցակն ընտրվում է ամբողջությամբ, եթե ստանում է քվեների առավելագույն քանակը: Հավանական չէ, որ անկախ թեկնածուները կարողանան մեծ չափով նվազեցնել քվոտայի ազդեցությունը, որովհետև նրանց հաղթելու հնարավորությունները նվազագույն են: Այս համակցության օրինակներ են Կամերունը (ամենամեծ երկու կուսակցությունները կամավոր կարգով ընդունում են կուսակցական քվոտաներ) և Ջիբութին:

*Կուսակցական բլոկային քվեարկություն + առաջադրում՝ տոկոսային կանոնակարգում մանդատի բաշխման/հաջորդականության **կանոններով** (օրինակ՝ «zipper» համակարգը, երբ կանայք և տղամարդիկ հերթագայում են միմյանց)*

Այս համակցությունը երաշխավորված է նաև առանց մանդատի բաշխման/դասային հաջորդականության կանոնի կիրառման, քանի որ ամբողջ ցուցակն ընտրվում է, եթե ստանում է քվեների առավելագույն քանակը:

Մեկ փոխանցելի քվեի համակարգ + ամրագրված տեղեր՝ լավագույն պարտվողի համակարգ

Այս համակցությունը ենթարկվում է նույն տրամաբանությանը, ինչ որ ԲՔ, ՍՔ և ՄԱՔ համակարգերը: Երբ յուրաքանչյուր ընտրատարածքում ամրագրված տեղերից բացի՝ բոլոր տեղերը լրացվում են և ոչ մի կին չի ընտրվում, ապա ընտրվում են առավելագույն քվեներ ստացած կանայք:

Խառը համամասնական համակարգ + ամրագրված տեղեր՝ միայն կին թեկնածուների համար նախատեսված ցուցակ

Այս համակցությունը երաշխավորում է այնքան կին թեկնածուների ընտրություն, որքան նախատեսված է քվոտայով:

Բորդա համակարգ + ամրագրված տեղեր՝ լավագույն պարտվողի համակարգ

Սա նույնպես հնարավոր է նույն տրամաբանությամբ, ինչ ԲՔ, ՍՔ, ՄԱՔ, ՄՓՔ համակարգերը, սակայն միայն բազմամանդատ ընտրատարածքներում:

5.2 Միջին համակցություններ, որոնք կարող են բարենպաստ ազդեցություն ունենալ, սակայն հատուկ ուշադրության կարիք ունեն

Բացի վերը ներկայացված լավագույն համակցություններից, կան նաև մի շարք այլ համակցություններ, որոնք կարող են մասամբ գործուն լինել, եթե մեր մտքում ունենանք որոշ յուրահատուկ փոփոխականներ: Ստորև նկարագրված են դրանցից մի քանիսը: Այս դեպքերը պետք է առավել մանրակրկիտ ուշադրության արժանան՝ օրենսդիր մարմնում կանանց ավելի լայն ներկայացուցչությունն ապահովելու ձգտող և ինստիտուցիոնալ համակարգերի ձևավորման ուղղությամբ աշխատող մարմինների կողմից, որպեսզի չվտանգվի կանանց քաղաքական մասնակցության նպատակը, քանի որ քվոտաների տրամադրումը կարող է չեզոքացվել ընտրական համակարգի տեխնիկական խնդիրների պատճառով:

Նման օրինակ կարող է հանդիսանալ *առանց քվոտաների կիրառման՝ մեծ ընտրատարածքներում, ցուցակներով համամասնական համակարգի* կիրառումը: Ցուցակներով համամասնական համակարգերում խրախուսվում է կանանց առաջադրումը և դրանով իսկ ընդլայնվում է նրանց՝ բազմազան միջոցներով ընտրվելու հավանականությունը: Կանայք կարող են առաջադրվել տղամարդկանց հետ միասին, որպեսզի թեկնածու տղամարդիկ առանձին մրցակցության մեջ չմտնեն: Քվեների մեծամասնությունն ուղղվում է կուսակցության կողմից մեկ տեղ ավելի շահելուն, ինչը նշանակում է, որ կուսակցությունների համար կարևոր է ընտրարշավն անցկացնել նաև իր մշտական համակիրների խմբից դուրս: Կուսակցությունների թիվը մեծ է և քաղաքականության/ծրագրերի առումով նրանք մոտ են միմյանց, հետևաբար, այն կուսկցությունները, որոնք չեն ընկալվում, որպես կանանց նկատմամբ «արդարացի» վերաբերմունք դրսևորող քաղաքական միավոր, առերեսում են քվեներ կորցնելու վտանգը: Որքան մեծ են ընտրատարածքները և կուսակցության չափը, այնքան ավելի մեծ է կանանց ընտրվելու հավանականությունը: Ամեն պարագայում, առանց քվոտաների կիրառման, զուտ ցուցակներով՝ համամասնական համակարգերի կիրառումը չի երաշխավորում կանանց բարձր ներկայացուցչություն:

Մեկ այլ օրինակ կարող է հանդիսանալ *ցանկացած համակարգի* կիրառումը (բացառությամբ՝ ամբողջ երկիրն ընդգրկող մեկ ընտրատարածքով՝ ցուցակներով համամասնական համակարգերի)՝ *ամրագրված տեղերով՝ որոշակի ընտրատարածքներ տրամադրելով միայն կին թեկնածուներին:* Այս համակցությունը տեսականորեն գործում է, սակայն առավել արդյունավետության համար՝ պահանջվում է, որ որոշակի աշխարհագրական տարածքներում առաջադրվելու իրավունք տրվի միայն կանանց: Բնականաբար դժվար է որոշել, թե հատկապես որ ընտրատարածքում է պետք կիրառել այս սկզբունքը, որովհետև թե՛ ընտրողներին, և թե՛ թեկնածուներին կարող է թվալ, որ իրենց ընտրելու իրավունքը և/կամ քաղաքական ազատությունները խախտվում են: Այդ ընտրատարածքները կարող են փոփոխվել ընտրությունից ընտրություն,

որպեսզի նույն ընտրատարածքները միշտ միայն կանանց համար նախատեսված չլինեն: Սա, ամեն դեպքում, տղամարդկանց համար ժամկետային սահմանափակում է ստեղծում. նույնիսկ եթե ընտրական օրենսգրքով հստակ սահմանված չէ, միևնույնն է, տղամարդ թեկնածուին չի թույլատրվում կրկին առաջադրվել իր ընտրատարածքում, երբ այն զուտ կանանց համար նախատեսված ընտրատարածքի է վերածվում: Եթե նույնիսկ տղամարդ թեկնածուներին թույլատրվում է առաջադրվել այլ ընտրատարածքում, նրանց համար, գործնականում, գրեթե անհնարին կլինի հաջողության հասնել անծանոթ ընտրատարածքում:

Սրա այլ օրինակներ կարող են հանդիսանալ *զուգահեռ կամ խառը համամասնական համակարգերը՝ առաջադրումների հետ միասին, այն է՝ տոկոսային կանոնակարգում՝ առանց մանդատի բաշխման/հաջորդականության կանոնների կամ տոկոսային կանոնակարգում հաջորդականության կանոններով (օրինակ՝ «zipper» քվոտաները, երբ կանայք և տղամարդիկ հերթագայում են միմյանց)*: Այս քվոտաները կարող են կիրառվել միայն որպես ցուցակներով համամասնական համակարգի մի մաս (եթե, ինչպես դա հաճախ լինում է, պարզ մեծամասնական համակարգը ընտրատարածքի տարր է հանդիսանում): Քվոտաների արդյունավետության վրա իր ազդեցությունն է թողնում ցուցակների բաց կամ փակ լինելու հանգամանքը, ինչպես նաև կուսակցությունների մեծությունը: Կրկին, որպես կանոն, կախված կուսակցության մեծությունից՝ աճում են կին թեկնածուների հնարավորությունները: Որպես օրինակ կարող է ծառայել Հայաստանը (չնայած միայն 15 տոկոս ամրագրված տեղերին):

5.3 Անհնարին կամ անբարենպաստ համակցություններ

Այս հրատարակության մեջ առանձնացվում է ընտրական համակարգերի և քվոտաների համակցության 16 տեսակ, որոնք կա՛մ անհնարին են դարձնում, կա՛մ էլ անբարենպաստ պայմաններ են ստեղծում կանանց՝ քաղաքական ներկայացուցչության բարձր մակարդակի հասնելու համար: Պետությունները, որոնք պատկանում են այս խմբին և ձգտում են բարձրացնել կանանց քաղաքական մասնակցության մակարդակը կարող են օժանդակել նրանց՝ ընտրվելու գործընթացում՝ վերանայելով գործող ընտրական համակարգը, կամ էլ ներդնելով այնպիսի քվոտաներ, որոնք կփոխեն վերոնշյալ համակցությունը՝ «անբարենպաստից» այն վերածելով մեկ այլ տիպի համակցության: Սա կարող է հակասական լինել, քանի որ ի հավելումն կանանց ներկայացուցչության աճի՝ այն կարող է զգալիորեն փոխել ընտրությունների արդյունքները, և հանգեցնել այլ՝ ավելի լայնածավալ քաղաքական հետևանքների: Հետևաբար, ընտրական համակարգի հնարավոր փոփոխությունները պետք է լավ մտածված լինեն: Փոփոխությունների համար խիստ անհրաժեշտ է, որպեսզի գործող օրենսդիր և ընտրական մարմինները ներկայացնող պաշտոնյաները դրսևորեն քաղաքական կամք և պատրաստակամութ-

յուն: Ավելին, փոփոխությունները պետք է վայելեն ազգային համապատասխան շահառուների աջակցությունը:

5.4 Աղյուսակի ամփոփում

Ընտրական ոչ մի համակարգում քվեները չեն կարող չեզոք կերպով փոխակերպվել մանդատների: Անկախ այն հանգամանքից, թե ինչ ընտրական համակարգ է գործում, այն կունենա մի շարք քաղաքական համատեքստեր՝ այդ թվում, կանանց ներկայացուցչության մակարդակի համար: «Ինչպիսին որ կան»՝ առանց քվոտաների, մեծ ընտրատարածքներում ցուցակներով համամասնական համակարգերը ապահովում են կանանց ընտրության համար առավել բարենպաստ պայմաններ՝ այն դեպքում, երբ միամանդատ ընտրատարածքներում կիրառվող համակարգերը խոչընդոտներ են ստեղծում կին թեկնածուների համար:

Այս առումով, ցուցակներով համամասնական համակարգի որոշ առավելություններն են՝ ա) այն մշտապես կիրառվում է բազմամանդատ ընտրատարածքներում և բ) ցուցակներով համամասնական համակարգով անցկացված ընտրությունների արդյունքում ձևավորված կուսակցությունների չափը սովորաբար մեծ է: Այնուամենայնիվ, ցուցակներով համամասնական համակարգը միակը չէ, որ լավ հիմքեր է ստեղծում քվոտաների կիրառման համար: Այլ համակարգեր, ինչպիսիք են մեծ ընտրատարածքներում և կուսակցական ցուցակներով անցկացվող քվեարկության համակարգերը, օրինակ՝ կուսակցական բլոկային քվեարկության համակարգը, նույնպես կարող են արդյունավետ լինել կանանց ընտրության խրախուսման գործում:

Քվոտաների ներդրումն ավելի է դժվարանում այն ընտրական համակարգերի կիրառման դեպքում, երբ ընտրություններն անցկացվում են փոքր ընտրատարածքներում և քվեարկվում են անհատ թեկնածուներ, իսկ առաջադրման գործընթացն ապակենտրոնացված է (տե՛ս 6.5 ենթակետը), ինչպես նաև այն ընտրական համակարգերի պարագայում, որոնք հանգեցնում են կուսակցությունների փոքր չափին, օրինակ՝ պարզ մեծամասնության, երկփուլային քվեարկության և այլընտրանքային քվեարկության համակարգերը: Նույնիսկ համամասնական համակարգերը, ինչպիսին է օրիակ՝ մեկ փոխանցելի քվեի համակարգը, բարդ կլինի համակցել որոշ կարգի քվոտաների հետ, քանի որ դրանք նույնպես թեկնածուակենտրոն են:

Քանի որ առաջադրման ընթացքում գործող քվոտաները (լինի դա սահմանված տոկոսաչափ, թվաքանակ կամ բաշխման հաջորդականության կանոն) կիրառելի չեն անկախ թեկնածուների համար, ապա այս քվոտաները, գործնականում, պակաս արդյունավետ են մեծ թվով անկախ թեկնածուների առկայության դեպքում: Փոքր թվով անկախ թեկնածուների առաջադրումը և բաշխման հաջորդականության կանոնների կիրառումն (ինչպես օրինակ «zipper» քվոտաները) ավելի հավանական է դարձնում կանանց ընտրությունը՝ այն թվաքանակով, որը սահմանված է քվոտայով: Թեկնածուների

քվեարկմամբ շատ համակարգեր, ամեն պարագայում, չեն թույլատրում կանխորոշված աստիճանակարգում, քանի որ քվեարկության օրը՝ հենց ընտրողներն են որոշում թեկնածուների աստիճանակարգումը:

Լավագույն պարտվողի համակարգը երաշխավորում է կանանց ընտրությունը (եթե առկա է կին թեկնածուների բավարար քանակ, և եթե մեկ անձից ավելի է ընտրվում յուրաքանչյուր ընտրատարածքից), սակայն այն կարող է հակասական լինել, քանի որ ավելի քիչ քվեներ հավաքած թեկնածուները կարող են առավելություն ստանալ՝ ավելի շատ քվեներ հավաքածների նկատմամբ: Տեսականորեն, թեկնածուների ցուցակներով քվեարկության ընտրակարգերում լավագույն պարտվողի համակարգը կարող է նույնիսկ մեկ կուսակցություն ներկայացնող կնոջ տեղը վերաբաշխել այլ կուսակցության օգտին, ինչը նույնպես կարող է հակասական լինել, քանի որ այն կազդի օրենսդիր մարմնի կազմի վրա: Այս քվոտայի կիրառումը կարող է ավելի վիճահարույց լինել, քան այլ տեսակի քվոտաների կիրառումը, քանզի սեռային պատկանելության հիման վրա՝ թեկնածուին տրված նախապատվությունն ավելի ակնհայտ է, քան այն դեպքում, երբ քվոտաներն օգտագործվում են առաջադրման ընթացքում:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ չնայած ամենաարդյունավետ քվոտաներն այն քվոտաներն են, որոնց թիրախն ավելի շատ հանդիսանում են արդյունքները, քան առաջադրման գործընթացը, սակայն ամեն դեպքում առաջադրման վրա սևեռված քվոտաները կարող են կիրառվել, եթե արդյունքի վրա հիմնված քվոտաները չափազանց հակասական են տվյալ երկրում: Այսպիսով, ընտրությունը մի կողմից՝ արդյունավետ, բայց հակասական քվոտաների, և մյուս կողմից՝ պակաս հակասական, բայց նաև նվազ արդյունավետ քվոտաների միջև է:

Եվ վերջում, հետաքրքիր է նկատել, որ «անհնարին» ընտրական համակարգեր գոյություն չունեն. քվոտային լուծումներ հնարավոր է գտնել նույնիսկ կանանց համար «անբարենպաստ» համարվող համակարգերում:

6. Այլ փոփոխականներ, որոնք ազդում են կանանց ներկայացուցչության մակարդակի վրա

Գործող ընտրական համակարգից զատ կան բազում այլ փոփոխականներ, որոնք կարող են ազդել քվոտաների արդյունավետության վրա մասնավորապես, և կանանց ներկայացուցչության մակարդակի վրա ընդհանրապես: Ստորև ներկայացված են այն հիմնական խնդիրները, որոնք անհրաժեշտ է դիտարկել:

6.1 Օրենքի պարտադրումը/կիրառումը

Ինչպես նկարագրվել է վերը, քվոտաները արդյունավետ միջոց են դառնում, երբ ստանում են օրենքի ուժ և, համապատասխանաբար, կիրառվում՝ քաղաքական միավորների կողմից: Քվոտաների կիրառումն ու պահպանումը երաշխավորելու համար անհրաժեշտ է, որ վերջիններս պարտադրված լինեն օրենքով (օրենքով կամ սահմանադրությամբ սահմանված քվոտաներ) և վերահսկվեն ընտրությունների կառավարման մարմինների կողմից: Անհրաժեշտ է նաև համապատասխան պատժամիջոցների օգնությամբ հետամուտ լինել քվոտաների խախտման դեպքերի կասեցմանը, և կիրառվող պատժամիջոցները պետք է բավականին ազդեցիկ լինեն, որպեսզի չանտեսվեն կուսակցությունների կողմից: Որոշ երկրներում և որոշ իրավիճակներում հնարավոր է ստանալ միևնույն արդյունքը թե՛ կամավոր քվոտաների, թե՛ օրենքով սահմանված, սակայն պատժամիջոցներ չնախատեսող քվոտաների միջոցով (ինչպես օրինակ ինդոնեզիական «հնարավոր» քվոտայի դեպքում, որտեղ կուսակցություններին կոչ է արվում դրսևորել բարի կամք և առնվազն 30 տոկոս կին թեկնածուներ ներառել իրենց ցուցակներում), սակայն այս պարագայում արդյունքը կախված կլինի առանձին կուսակցությունների կամքից և հնարավոր է, որ ընտրությունից ընտրություն տարբեր լինի:

6.2 Ընտրությունների կառավարման մարմինների հնարավորությունները

Ընտրությունների կառավարման փորձառու մարմինը պետք է քաղաքական կուսակցություններին տեղեկացնի ընտրական համակարգի առանձնահատկությունների և դրանում կիրառվող կամավոր կամ օրենքով նախատեսված քվոտաների մասին: Ի հավելումն, ընտրությունների կառավարման մարմինները պետք է ցանկություն դրսևորեն և ունակ լինեն վերահսկելու և կառավարելու քվոտավորման համակարգը, երաշխավորելու, որ դրանց խախտման դեպքում՝ կներկայացվեն և կկիրառվեն համապատասխան պատժամիջոցներ:

6.3 Մշակութային գործոններ և ընտրողների նախապատվություններ

Ընտրողների վերաբերմունքը կին թեկնածուների հանդեպ կարող է անմիջական ազդեցություն ունենալ վերջիններիս ընտրվելու հավանականության վրա, հատկապես թեկնածուների ցուցակով ընտրական համակարգերի դեպքում:

Բացի այդ, հանրային լրատվամիջոցների և ընտրական քարոզարշավի համար անհրաժեշտ ռեսուրսների մատչելիությունը նույնպես էական ազդեցություն ունի կանանց՝ որպես թեկնածու լավագույնս ներկայանալու վրա[8]:

6.4 Հավակնորդներ/Թեկնածուներ

Կին-թեկնածուներին պետք է բացահայտեն, ներկայացնեն և պատրաստեն քաղաքական կուսակցությունները: Կարևոր է ստեղծել այնպիսի խթաններ, որոնք կդրդեն կանանց՝ առաջադրելու իրենց թեկնածությունը: Քաղաքական կուսակցությունները կարևոր դեր կարող են ունենալ տաղանդավոր կանանց բացահայտելու և կին թեկնածուներին աջակցելու գործում:

6.5 Առաջադրման կենտրոնացված/ ապակենտրոնացված ընթացակարգեր

Առաջադրման ընթացակարգերն ազդում են ներկուսակցական կանոնադրության և օրենքով սահմանված քվոտաների արդյունավետության վրա: Մի կողմից՝ առաջադրման կենտրոնացված ընթացակարգը կարող է ավելի դյուրին և արագ դարձնել կուսակցության կողմից ներկայացվող թեկնածությունների վերաբերյալ որոշման ընդունումը՝ առանց կուսակցությունների տեղական գրասենյակներին առանձին-առանձին համոզելու անհրաժեշտության: Սակայն մյուս կողմից, սա կարող է դժվարացնել տեղերում ակտիվ գործող, բայց կենտրոնական մակարդակում ճանաչում չվայելող կանանց առաջադրումը՝ համապետական մակարդակում: Երբ թեկնածուների առաջադրումը տեղի է ունենում կենտրոնացված՝ կուսակցության ղեկավարի կամ մի խումբ մարդկանց կողմից՝ կուսակցության առաջնորդների հետ ունեցած անձնական հարաբերությունների հիման վրա, ապա հատկապես անբարենպաստ իրավիճակ է ստեղծվում կանանց համար: Քիչ հավանական է, որ գյուղական շրջաններում բնակվող կանայք սերտ հարաբերություններ ունենան կուսակցության ղեկավարության հետ, և արդյունքում կարող է չառաջադրվեն:

7. Եզրակացություններ և առաջարկներ

Այս հրատարակությամբ ներկայացվեց ընտրական համակարգերի և քվոտաների միջև առկա հարաբերակցությունը, բացահայտելով, թե որ համակցություններն են առավել բարենպաստ կանանց համար և որոնք են կարող արդյունավետ լինել: Ամեն դեպքում, ընտրական համակարգերի և քվոտաների հարաբերակցության հիմքում դրված տրամաբանությունը կիրառելի է հասարակության ցանկացած այլ խմբի ներկայացուցչության ընդլայնման համար, օրինակ՝ ազգային փոքրամասնությունների: Սա չի հանգեցնում որևէ անմիջական եզրակացության, թե ընտրական որ համակարգը կամ քվոտայի որ տեսակն ընտրել, քանի որ ընտրական ինստիտուտները ձևավորելիս առկա են ուշադրության արժանի բազում այլ կանխադրույթներ: Այնուամենայնով, հուսով ենք, որ այս հրատարակությունը կբարձրացնի իրազեկությունը գործող փոփոխականների, կատարվելիք ընտրանքների և կանանց ներկայացուցչության վրա վերոնշյալ գործոնների ազդեցության վերաբերյալ:

Ինչպես միշտ, պետք է հաշվի առնվեն տվյալ երկրի առանձնահատկությունները: «Խաղի կանոնները» ձևակերպելիս, հարկ է ամբողջական հայացք նետել՝ հստակ պատկերացնելու համար այն ուղիները, որոնց միջոցով տարբեր տարրեր կարող են փոխլրացնել միմյանց և խուսափել բացերից ու հակասություններից: Ավելին, անշուշտ առկա են այլ օրենքներ և գործոններ, որոնք կարող են հաշվի առնվել՝ օրենսդիր մարմիններում կանանց ներկայացուցչությունը խրախուսելու գործում:

Ինչպես նշվեց, ընտրական համակարգերի և քվոտաների տարբեր համակցությունները տարաբնույթ ազդեցություն են ունենում: Հստակ է միայն մեկ եզրակացություն, որ *ընտրական համակարգերը և կիրառվելիք քվոտաները պետք է դիտարկվեն միասնական, և ոչ թե առանձին-առանձին:*

Կարևոր է նաև նշել, որ ինստիտուցիոնալ համակարգեր ձևավորողները չպետք է կաշկանդված լինեն առկա մասնագիտական գրականությամբ և/կամ այլ երկրների փորձի ուղղակի ներդրմամբ, ինչպես նաև ընդհանրական լուծումներով, քանի որ պարտադիր չէ, որ վերջիններս լավագույնը լինեն տվյալ պետության համար: Թե՛ ընտրական համակարգերը, և թե՛ քվոտաները կարող են փոխակերպվել և հարմարեցվել այն միջավայրին, որտեղ դրանք կիրառվում են:

Ընտրական ինստիտուտներ ձևավորելիս՝ խորհուրդ է տրվում քննարկման, ձևավորման և իրականացման փուլերում, հնարավորինս շատ շահառուներ ներգրավել՝ խնդիրների խոր ընկալմանը հասնելու նպատակով և հետևաբար, ընդունվող դրույթների համար ապահովելով առավել մեծ ծավալի օրինականություն:

Ի վերջո, գենդերային քվոտաների կիրառումը կարող է զգալիորեն մեծացնել կանանց մասնակցությունը քաղաքականության մեջ, սակայն չպետք է մոռանալ, որ քվոտաները հաճախ կարող են՝ որպես նշաչափ դիտարկվել կին թեկնածուների առաջադրման համար: Օրինակ՝ քվոտան, որը պա-

հանջում է, որ թեկնածուների 30 տոկոսը պետք է կին լինի՝ չի հանգեցնի ավելի մեծ տոկոսով կին թեկնածուների առաջադրմանը, և արդյունքում կսահմանափակի կանանց քաղաքական ներկայացուցչությունը: Կանանց ներկայացուցչությունը մեծացնելու նպատակով, հարկավոր է միևնույն ժամանակ աշխատել տարբեր ուղղություններով. ընտրական համակարգերը և քվոտաները այդ ուղղություններից ընդամենը երկուսն են:

8. Նշումներ

1. Տե՛ս Միջպառլամենտական Միության (IPU) կայքը՝ http://www.ipu.org:
2. Նույն տեղում:
3. Ընտրական քվոտան վերաբերում է քվեների որոշակի քանակի, որ համապատասխան ընտրատարածքում մեկ տեղ է երաշխավորում կուսակցությանը կամ թեկնածուին՝ համամասնական համակարգով: Ներկայումս, սովորաբար կիրառվում է երեք տարբերակ՝ Հերի, Դրուփի (կամ Հագենբախ-Բիշոֆի) և Իմպերիալի քվոտաները:
4. Որոշ խառը համամասնական համակարգերում՝ օրենսդիր մարմնում տեղերի հստակ վերջնական քանակը չի հստակեցվում մինչև ընտրությունների ավարտը: Որոշ երկրներում օրենսդրի չափը փոփոխվում է՝ բնակչության քանակին համապատասխան: Այս դեպքերում, քվոտաների ձևակերպման ընթացքում, հնարավոր է իրական տարբերություններ լինեն՝ պահանջվող տոկոսի և ամրագրված տեղերի նշված քանակի միջև:
5. Տե՛ս, օրինակ՝ *Women in Parliament: Beyond Numbers. A Revised Edition* (Stockholm: International IDEA, 2005): Matland, Richard E., “Enhancing Women’s Political Participation: Legislative Recruitment and Electoral Systems”, chapter 3, pp. –110; Sineau, Mariette, “The French Experience: Institutionalizing Parity”, case study, pp. 12–30; and Meintjes, Sheila, “South Africa: Beyond Numbers”, case study, p. 231).
6. Բերված երկրների օրինակները հիմված են 2006թ. դեկտեմբերի դրությամբ առկա տեղեկատվության վրա:
7. Սա գործածվում է Մավրիկիում և Պաղեստինում թերներկայացված խմբերի, բայց ոչ կանանց համար:
8. Տե՛ս Ballington, Julie, “Gender Equality in Political Party Funding”, in *Funding of Political Parties and Election Campaigns* (Stockholm: International IDEA, 2003), chapter, pp. 157-67.

9. Նյութերի ցանկ՝ հետագա ընթերցանության համար

INTERNATIONAL IDEA-ի հրատարակություններ

Հրատարակությունները հասանելի են ինտերնետային կայքում անվճար կամ կարող են պատվիրվել տպագրված տարբերակները:

(1) http://www.idea.int/publications/browse/gender.cfm

- *Կանայք Խորհրդարանում. թվերից այն կողմ, վերանայված հրատարակություն, 2006թ.*

Women in Parliament: Beyond Numbers. A Revised Edition, 2006
անգլերեն

- *Ժողովրդավարության կառուցում Եգիպտոսում. կանանց քաղաքական մասնակցություն, քաղաքական կուսակցություններ և ժողովրդավարական ընտրություններ*
  Building Democracy in Egypt: Women's Political Participation, Political Party Life and Democratic Elections
  անգլերեն, արաբերեն
- *Ժողովրդավարության կառուցում Հորդանանում. կանանց քաղաքական մասնակցություն, քաղաքական կուսակցություններ և ժողովրդավարական ընտրություններ*
  Building Democracy in Jordan: Women's Political Participation, Political Party Life and Democratic Elections
  անգլերեն, արաբերեն
- *Ժողովրդավարության կառուցում Եմենում. կանանց քաղաքական մասնակցություն, քաղաքական կուսակցություններ և ժողովրդավարական ընտրություններ*
  Building Democracy in Yemen: Women's Political Participation, Political Party Life and Democratic Elections
  անգլերեն, արաբերեն
- *Գենդերային քվոտաներ. ժողովրդավարություն և ներկայացուցչություն*
  Cuotas de género: democracia y representación
  իսպաներեն
- *Կանանց քաղաքական մասնակցության հզորացումը Ինդոնեզիայում*
  Strengthening Women's Political Participation in Indonesia
  անգլերեն, բահասա
- *Իշխանության հասկացությունը՝ կանանց տեսանկյունից*
  La concepción del poder desde las mujeres
  իսպաներեն
- *Քվոտաների կիրառում. Աֆրիկյան փորձ*
  The Implementation of Quotas: African Experiences
  անգլերեն
- *Քվոտաների կիրառում. Ասիական փորձ*
  The Implementation of Quotas: Asian Experiences
  անգլերեն
- *Քվոտաների կիրառում. Եվրոպական փորձ*
  The Implementation of Quotas: European Experiences
  անգլերեն

- *Քվոտաների կիրառում. Լատինամերիկյան փորձ*
  The Implementation of Quotas: Latin American Experiences
  անգլերեն, իսպաներեն
- *Կանայք Խորհրդարանում. թվերից այն կողմ*, (1998թ. հրատարակություն)
  Women in Parliament: Beyond Numbers (1998 edition)
  անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, իսպաներեն
- *Կինը, քաղաքական կուսակցությունները և ընտրական բարեփոխումները*
  Mujer, Partidos Políticos y Reforma Electoral
  իսպաներեն

(2) http://www.idea.int/publications/browse/electoral.cfm

- *Ընտրական համակարգերի ձևավորում. International IDEA-ի նոր ձեռնարկ* (2005թ. հրատարակություն)
  Electoral System Design: The New International IDEA Handbook (2005 edition)
  անգլերեն, նեպալերեն, իսպաներեն
- *Ընտրական համակարգեր*
  Sistema Electoral
  իսպաներեն
- *Ընտրական համակարգերի ձևավորում* (2002թ. հրատարակություն)
  Electoral System Design (2002 edition)
  անգլերեն, արաբերեն, բիրմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն
- *Ընտրական համակարգեր և ընտրական բարեփոխում. ներածություն*
  Sistemas electorales y reforma electoral: una introducción
  իսպաներեն

Այլ հեղինակների աշխատությունների/էսսեների հավաքածուն կարելի է գտնել http://www.quotaproject.org կայքում (International IDEA և Ստոկհոլմի համալսարան):

Երախտիքի խոսք.

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր իրենց մասնակցությունն են ցուցաբերել այս հրատարակության պատրաստմանը՝ Արմինէ Առաքելեանին, Էնդրյու Էլլիսին, Քամիլլա Հանսոնին, Մելինդա Խիմենեսին, Իվ Յոհանսոնին, Կառլոս Նավառոյին, Ան Նգույենին և Քրիստեն Սամփլին: Շնորհակալ ենք նաև International IDEA-ի հրատարակությունների պատասխանատու Ֆլորենսիա Էնգելին:

10. Տերմինների բառարան

Այլընտրանքային քվեարկություն. միամանդատ ընտրատարածքներում կիրառվող պլյուրալիստական/մեծամասնական համակարգ է, որի դեպքում ընտրողները նախապատվության կարգով քվեաթերթիկում կարող են նշել մի քանի թեկնածու: Ընտրողները, քվեաթերթիկում իրենց նախապատվությունները նշելու համար, օգտագործում են թվեր: Թեկնածուն, որը ստանում է վավեր առաջին նախապատվության քվեների բացարձակ մեծամասնությունը (50 տոկոսից ավելի), հայտարարվում է ընտրված: Եթե թեկնածուներից և ոչ մեկը չի ստանում քվեների մեծամասնություն՝ ըստ առաջին նախապատվության, ապա ամենաքիչ քանակությամբ առաջին նախապատվությամբ քվեներ ստացած թեկնածուները բաշխումից հանվում են, իսկ նրանց քվեները վերաբաշխվում են՝ ըստ նշված երկրորդ նախապատվությունների՝ մինչև թեկնածուներից որևէ մեկը չի ստանում ձայների բացարձակ մեծամասնություն: Այս համակարգի պարագայում ընտրողները քվեարկում են թեկնածուի, այլ ոչ թե քաղաքական կուսակցության օգտին:

Բլոկային կուսակցական քվեարկություն. պլյուրալիստական/մեծամասնական համակարգ, որը կիրառվում է բազմամանդատ ընտրատարածքներում, և որի դեպքում՝ ընտրողներն ընտրություն են կատարում կուսակցական ցուցակների, այլ ոչ թե առանձին թեկնածուների միջև: Քվեների մեծամասնություն ստացած կուսակցությունը ստանում է տվյալ ընտրատարածքի բոլոր մանդատները:

Բլոկային քվեարկություն. պլյուրալիստական/մեծամասնական համակարգ է, որը կիրառվում է բազմամանդատ ընտրատարածքներում: Ընտրողներին տրվում է այնքան քվեի իրավունք, որքան թեկնածու պետք է ընտրվի: Առավել մեծ թվով քվեներ հավաքած թեկնածուները ստանում են մանդատը: Այս համակարգի դեպքում, ընտրողները սովորաբար քվեարկում են թեկնածուի, այլ ոչ թե կուսակցության օգտին: Բլոկային համակարգերի մեծ մասում՝ ընտրողները կարող են օգտագործել իրենց քվեներից այնքանը, որքանը՝ կցանկանան:

Երկփուլային քվեարկության համակարգ. պլյուրալիստական/մեծամասնական համակարգ, որի դեպքում, եթե ընտրությունների առաջին փուլում թեկնածուներից կամ կուսակցություններից և ոչ մեկը չի ստանում քվեների բացարձակ մեծամասնություն (50 տոկոս գումարած մեկ ձայն), ապա անցկացվում է քվեարկության երկրորդ փուլ: Երկփուլային քվեարկության համակարգը կարող է ունենալ *պլյուրալիստական/մեծամասնական համակարգի* ձև, երբ երկուսից ավելի թեկնածուներ մրցում են երկրորդ փուլում և հաղթող է ճանաչվում նա, ով ստանում է քվեների առավելագույն քանակը՝ անկախ այն հանգամանքից՝ ստացել է քվեների բացարձակ մեծամասնություն, թե ոչ, կամ *մեծամասնական* ձև, երբ քվեարկության

երկրորդ փուլին մասնակցում են միայն առաջին փուլում առավելագույն քվեներ ստացած երկու թեկնածուները:

Զուգահեռ համակարգ. խառը համակարգ, որի դեպքում ընտրողներն իրենց ընտրությունը կատարում են միաժամանակ երկու տարբեր՝ համամասնական ներկայացուցչության և (սովորաբար) պլյուրալիստական/մեծամասնական համակարգերի զուգակցմամբ: Սակայն այս դեպքում, համամասնական համակարգով արդյունքները հաշվելիս հաշվի չեն առնվում պլյուրալիստական/մեծամասնական համակարգով բաշխված մանդատները:

Ընտրական բանաձև. կանոններ, որոնցով որոշվում է հաղթողը/հաղթողները՝ որոշակի ընտրական համակարգում:

Ընտրական համակարգ. ընտրական օրենսդրության և կարգերի այն հատվածը, որը սահմանում է կուսակցությունների և թեկնածուների՝ ներկայացուցչական մարմնում ընտրվելու կարգը: Հիմնական երեք բաղադրիչներն են՝ ընտրական բանաձևը, քվեաթերթիկի կառուցվածքը և ընտրատարածքի չափը:

Ընտրատարածք. աշխարհագրական գոտի, որի կարող է բաժանվել պետությունը, վարչական տարածքը կամ վերպետական միավորը՝ ընտրական նպատակների համար: Ընտրատարածքից խորհրդարան կարող է ընտրվել մեկ կամ մեկից ավելի ներկայացուցիչ:

Ընտրատարածքի մեծություն/չափ. տվյալ ընտրատարածքից ընտրվող խորհրդարանի ներկայացուցիչների թիվը:

Ընտրական քվոտա. համամասնական ներկայացուցչության համակարգում կուսակցության կամ թեկնածուի հաղթանակը երաշխավորելու համար քվեների անհրաժեշտ քանակ. սովորաբար կիրառվում է երեք տարբերակ՝ Հերի քվոտա, Դրուփի (կամ Հագենբախ-Բիշոֆի) և Իմպերիալի քվոտա:

Ընտրությունների անցկացման մակարդակը. այն մակարդակն է, որտեղ ընտրվում է տվյալ թեկնածուն: Ընտրությունները կարող են լինել տեղական, տարածքային կամ համապետական: Այսպիսով, բոլոր ընտրական համակարգերում առկա է ընտրությունների անցկացման առնվազն մեկ մակարդակ, սակայն որոշ ընտրական համակարգեր ենթադրում են երկու կամ անգամ երեք մակարդակներում ընտրությունների անցկացում:

Ընտրությունների կառավարման մարմին (ԸԿՄ). ընտրական օրենսգրքով սահմանված մարմին, որը պատասխանատու է ընտրությունների անցկացման համար: Շատ երկրներում ԸԿՄ-ները կազմված են այդ նպատակով ստեղծված անկախ հանձնաժողովներից կամ հատուկ կառավարական վարչություններից:

Լավագույն պարտվողի համակարգ. դրույթներ, որոնց համաձայն որոշակի խումբ ներկայացնող թեկնածուները (օր.

կանայք), նույն խումբը ներկայացնող մյուս թեկնածուների համեմատ առավելագույն թվով քվեներ ստանալով՝ անցնում են խորհրդարան, եթե անգամ ավելի պակաս քվեներ են հավաքել, քան մյուս թեկնածուները, մինչև որ ապահովվի քվոտայով սահմանված թիվը: Օրինակ, ըստ սահմանված քվոտաների ընտրվում են առավելագույն թվով քվեներ ստացած կին թեկնածուները, անգամ այն պարագայում, եթե տղամարդ թեկնածուներն ավելի մեծ թվով քվեներ են ստացած լինում:

Խառը համամասնական համակարգ. խառը համակարգ, որի դեպքում ընտրությունը կատարվում է երկու տարբեր համակարգերով, առավել հաճախ, պլյուրալիստական/մեծամասնական (սովորաբար կիրառվում է միամանդատ ընտրատարածքներում) և համամասնական ներկայացուցչության ընտրական համակարգերի համադրության միջոցով: Համամասնական տեղերը փոխհատուցում են ցանկացած անհամամասնություն, որ ծագել է պլյուրալիստական/մեծամասնական համակարգի արդյունքում:

Կուսակցության մեծություն/չափ. ընտրատարածքի դեպքում՝ յուրաքանչյուր կուսակցությունից կամ դաշինքից ընտրված ներկայացուցիչների միջին թիվը: Համապետական մակարդակով, բոլոր ընտրատարածքների համար կուսակցությունների մեծության/չափի միջինը:

Համամասնական ներկայացուցչություն. ընտրական համակարգերի ընտանիք, որի հիմքում ընկած է՝ կուսակցության կամ դաշինքի օգտին ստացված քվեները՝ համամասնորեն մանդատների վերափոխելու սկզբունքը: Օրինակ, եթե կուսակցությունը ստանում է քվեների 30 տոկոսը, ապա այն ստանում է նաև տեղերի մոտ 30 տոկոսը: Բոլոր համամասնական համակարգերը պահանջում են բազմամանդատ ընտրատարածքների կիրառում: Համամասնական համակարգերի երկու հիմնական տեսակ կա. ցուցակներով համամասնական ներկայացուցչության համակարգ և մեկ փոխանցելի քվեի համակարգ:

Հաշվարկման Բորդա համակարգ. քվեաթերթիկի միջոցով թեկնածուների ցուցակ ներկայացնող նախապատվական համակարգ է, որը կիրառվում է ինչպես միամանդատ, այնպես էլ բազմամանդատ ընտրատարածքներում: Ընտրողներն իրենց նախապատվություններն արտահայտում են թվերի միջոցով՝ աստիճանակարգելով թեկնածուներին՝ նախապատվության նվազեցման կարգով: Հաշվարկների ամփոփման արդյունքում՝ առավելագույն քվե ստացած թեկնածուները հայտարարվում են ընտրված:

Մեկ անփոխանցելի քվեի համակարգ. բազմամանդատ ընտրատարածքում յուրաքանչյուր ընտրող ունի մեկ քվեի իրավունք: Առավելագույն քվեներ ստացած թեկնածուները հայտարարվում են հաղթող: Ընտրողները տվյալ դեպքում քվեարկում են ավելի շուտ թեկնածուի, քան քաղաքական կուսակցության օգտին:

Մեկ փոխանցելի քվեի համակարգ. բազմամանդատ ընտրատարածքներում կիրառվող նախապատվական համակարգ է, որտեղ ընտրողներն աստիճանակարգում են թեկնածուներին՝ ըստ նախապատվության, և անմիջապես ընտրվում են այն թեկնածուները, որոնք հատում են առաջին նախապատվությամբ սահմանված ընտրական քվոտան: Հաջորդող հաշվարկներում վերաբաշխվում է ինչպես նվազագույն քվեներ ստացած, դուրս մնացած թեկնածուների, այնպես էլ հաղթող թեկնածուների քվեների մնացորդը, մինչև որ բավարար թվով թեկնածուներ չեն ընտրվում: Սովորաբար, ընտրողները քվեարկում են թեկնածուի, այլ ոչ թե քաղաքական կուսակցության օգտին, չնայած, հնարավոր է նաև կուսակցական ընտրական ցուցակների տարբերակը:

Շեմ. աջակցության այն նվազագույն մակարդակը, որն անհրաժեշտ է կուսակցության ներկայացուցչությունն օրենսդիր մարմնում ապահովելու համար: Շեմը կարող է լինել ֆորմալ՝ օրենքով, սահմանադրությամբ հաստատված նիշ, որը սովորաբար դրսևորվում է քվեարկված վավեր քվեների տոկոսային արտահայտությամբ, կամ կարող է լինել արդյունավետ կամ «բնական», այն է՝ գործող ընտրական համակարգի մաթեմատիկական առանձնահատկությունը:

Պարզ մեծամասնության համակարգ. պլյուրալիստական/մեծամասնական ընտրական համակարգի պարզագույն ձևն է: Հաղթող է ճանաչվում առավելագույն քանակությամբ քվեներ հավաքած թեկնածուն, եթե անգամ չի ստանում վավեր քվեների բացարձակ մեծամասնությունը: Այս համակարգը կիրառվում է միամանդատ ընտրատարածքներում: Ընտրողները քվեարկում են թեկնածուների, այլ ոչ թե քաղաքական կուսակցությունների օգտին:

Սահմանափակ քվեարկություն. բազմամանդատ ընտրատարածքներում կիրառվող ընտրական այն համակարգն է, որի դեպքում՝ ընտրությունը կատարվում է թեկնածուների ցուցակ ներկայացնող քվեաթերթիկի միջոցով: Ընտրողներից յուրաքանչյուրին տրվում է մի քանի՝ բայց նախատեսված մանդատներից պակաս քվեի իրավունք: Հաղթող են ճանաչվում առավելագույն քվեներ ստացած թեկնածուները:

Ցուցակներով համամասնական ներկայացուցչության համակարգ. համամասնական ներկայացուցչությունը պահանջում է բազմամանդատ ընտրատարածքների կիրառում: Ցուցակներով համամասնական ներկայացուցչության համակարգի դեպքում՝ յուրաքանչյուր կուսակցություն կամ խմբակցություն բազմամանդատ ընտրատարածքներում ներկայացնում է թեկնածուների իր ցուցակը: Ընտրողները քվեարկում են կուսակցության օգտին, իսկ կուսակցությունները համապետական քվեարկության մեջ՝ համամասնորեն իրենց մասնաբաժնին, համապատասխան մանդատներ են ստանում: Օրինակ, որոշ փակ ցուցակների համակարգերում, հաղթող թեկնածուները որոշվում են ցուցակում իրենց զբաղեցրած տեղին համապատասխան՝ ըստ հերթականության: Եթե ցուցակ-

ները «բաց» են, ապա ընտրողները կարող են ազդեցություն ունենալ թեկնածուների հերթագայության վրա՝ նշելով անձնական նախապատվությունները:

Քվեաթերթիկի կառուցվածք. քվեաթերթիկում ընտրական նախապատվությունները շարադրելու եղանակ. մասնավորապես, թեկնածուների կամ կուսակցությունների ցուցակ ներկայացնող քվեաթերթիկների միջոցով:

Քվոտա. ընտրովի մարմիններում տեղերի որոշակի քանակ կամ կուսակցությունների, դաշինքների կողմից առաջադրված թեկնածությունների որոշակի տոկոս, որը պետք է զբաղեցնեն որոշակի խմբերի ներկայացուցիչները (այս հրատարակության մեջ խոսքը կանանց մասին է). կիրառվում է նվազագույն թվով կանանց առաջադրումը և ընտրությունն ապահովելու նպատակով:

Zipper (կայծակաճարմանդ). քվոտա, որը պահանջում է, որ կուսակցության ցուցակներում ներկայացվող յուրաքանչյուր երկրորդ թեկնածուն լինի կին: Այն հայտնի է նաև որպես «վագրածի» (զեբր) անվանումը կրող համակարգ: